կատաստի թարմ ձէթի վրայ։ Կենդանիների ճարպից և բուսական իւղերից (ձէթ) պատրաստուած արհեստական իւղը միանգամայն անվնաս է, եթէ խնամքով է պատրաստուում։ Դորա տուած վնասը միայն այն է, որ արհեստական իւղը կովի իւղն աղ և վերջնի գնովն են վաճառում։

Անդադարութեան տեսակէտով մի և նոյն բանն է կենդանիների կամ բուսական իւղ գործածելը. այդ միայն ճաշակի գործ է։ Բուժական տեսակէտից խողի կամ եղան ճարպը մի և նոյն ներդործութիւնն է անում. ինչպէս և յաճախ գովաբանուած շան, ոզնու, եղջերուի և արջի ճարպը։ Շատերը կարծում են թէ չեն կարող իւղալի կերակուր ուտել՝ առանց վրայից մի քիպանակ օղի խմելու. բայց եթէ դորա փոխարէն նոքա ուտեն մի կտոր հաց աղ ու պղպեղով, ամենևին չեն զգուլ իւղալի կերակրներից։ Աւելորդ չի լինիլ ասել, որ ամառն առհասարակ աւելի քիչ պէտք է գործ ածել իւղալի նիւթեր, բան ձմեռը, երբ մեր մարմինն աւելի է ջերմութիւն կորցնում։

Շաքարը (շաքարի եղէգնի հիւթից, իսկ մեծ մասամբ բաղկից (ճակնդեղ) պատրաստուած) և մեղրը ոչ միայն քաղցր և ախորժելի համեմունք են մեր կերակրների համար, այլ և չափաւորից դիւրամարս սննդարար նիւթեր են։ Դոքա վնասում են ատամներին ու ատամոքսին միայն այն դէպքում, երբ գործ են ածուում առանց համեմունքի, օր. երբ ուտում են կարծր շաքար։ Բայց այնու ամենայնիւ ամենայն օր քաղցրեղէն ուտող մարդը դորա վնասակար հետևանքները կը նկատէ վերջ ի վերջոյ։

(Կը շարունակուի)

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Քիմիական լուցկու առաջին հնարողը. — „Petit Temps“ թերթի խօսքերին նայելով, մի քանի ամիս սրանից առաջ, Գրանոխայի Ժիրա նահանգի Սան—Լոսէր փոքրիկ քաղաքի հրապարակի վրայ մի համեստ արձան են կանգնեցրել ի յիշատակ Կարլ Մարկ Սոռիայի, որն ամենից առաջ դատաւ քիմիական լուցկին։

Սոռիան գիւղական, հասարակ բժիշկ էր. սակայն վերոյիշեալ նահանգի բոլոր գիւղացիներին խիստ լաւ յայտնի անձնաւորութիւն։ Նա դեռ 17 տարեկան հաղիւ կար, երբ դատաւ քիմիական լուցկու պատրաստելը։

Մի անգամ, 1830 թուին, Դոլի ուսումնարանի ուսուցիչը, որտեղ սովրում էր Սոռիան, իր աշակերտների առաջ մի այսպիսի հետաքրքիր փորձ կատարեց. սանդի մէջ քլորաթթուի տընկաղ, մի քիչ էլ ծծումբ լցրեց և երբ սանդի տոռով սկսեց ծեծել խառնուրդը, բուսականին բարձր ձայն լսուեցաւ, սակայն առանց լոյս կամ կրակ արձակելու։ Հէնց այս չնչին հանդամանքը Սոռիայի հետաքրքրութիւնը շարժեց և գլխաւոր առիթն եղաւ նրա անմահանալուն։ Իր սենեակը վերադառնալով, նա սկսեց ինքն իրեն մտածել. «Եթէ այս խառնուրդի վրայ որ և է մի ուրիշ դիւրավառ նիւթ աւելացնելու լինինք, օրինակ լուսակիը կամ մի ուրիշ նման բան, արդեօք հնարաւոր չի՞ լինիլ կրակ էլ ստանալ։» Եւ որպէս զի կարողանար լուսակիը, ինչպէս և ուրիշ հարկաւոր նիւթեր ձեռք բերել, Սոռիան որոշեց օգուտ քաղել առաջնիայ արձակուրդներից և մօտիկ բարեկամութիւն էլ հաստատեց իրենց քաղաքի դեղագործի հետ։ Նա հատաւ իր նպատակին. բարի դեղագործը համաձայնուեցաւ նրան առանց դեղատոմսի ծծումբ և այլ անհրաժեշտ նիւթերը տալու։ Այդ օրուանից Սոռիայի սենեակն իսկական դործարանի փոխարկուեցաւ։ Փորձերն անընդհատ կրկնուում էին, բայց ոչ միշտ էլ յաջող ու անվնաս։ Մի քանի անգամ մեր անզգոյշ քիմիկոսը վատնդաւոր վէրքեր էլ ստացաւ, սակայն գործից յետ կանգնել մտքովն անգամ չէր ուզում անցկացնել, մանաւանդ որ փորձերը, կարծես, բարեյաջող ելք էին խոստանում։ Նա այդ միջոցում մի նոր միտք էլ յղացաւ. մտածեց թափանցել փայտի կտորի ծայրը իր պատրաստած խառնուրդի մէջ, յետոյ տաք քլորաթթուի շաղախի մէջ մտցնել և ապա շփել պատին, որի վրայ առաջուց լուսակիը էր քսել։ Նրա հիացմունքին չափ չկար, երբ յանկարծ վառուող լուցկու բոցը տեսաւ։ Նա շտապեց և շուտով մի քանի այդպիսի լուցկիներ էլ պատրաստեց։ Նոյն այդ բոպէին սենեակի դուռը բացուեցաւ և նրա ընկերներից մէկը ներս մտաւ։ «Նայիր», աղաղակեց Սոռիան, «ես կքսեմ այս փայտի կտորը պատին և նա խսկոյն կվառուի»։ Իսկ ընկերը չտեսնուած երևոյթից գլուխը կորցնելով, սենեակից դուրս թռաւ և սկսեց ամենն մի պատահողի պատմել ու ասել, թէ Սոռիան նոր տեսակի լուցկի է գտել, որն ինքն իրեն վառուում է։ Երիտասարդ Սոռիան լուցկի պատրաստելու արտօնութիւն աշխատեց ձեռք բերել, սակայն այնքան փող չունէր, որ կարողանար տէրութիւնից պահանջուած 1500 ֆր. տալ։

Երկու տարուց յետոյ արդէն ամէն տեղ այդպիսի լուցկիներ էին վաճառում, բայց ոչ իբրև ֆրանսիական, այլ դերմանական մարքի ու աշխատանքի արդիւնք։ Էլ դուիկսբուրդ քաղաքի

բնակիչ Փրեդերիկ Կամերէր դերմանացին ժամանակաւորապէս խլեց Սոսխայի փառքը. սակայն անաչառ պատմութիւնը այդ գիւան անողի առաջնութեան իրաւունքը Սոսխային է տալիս։ Իսկ ինչ վերաբերում է Սոսխայի ապագայ կեանքին՝ այսքանն յայտնի է, որ նա Դոլի ուսումնարանն աւարտելուց յետոյ մտաւ Բեզանսոնի բժշկական բաժինը, որտեղից ուսուցչապետի տասիճան ստանալով, վերադարձաւ իր հայրենի քաղաքը։ Նա իր ամբողջ կեանքը անցկացրեց խեղճ ու ազգատ գիւղացիների ցաւերն ու կարիքները հոգալով. իսկ ազատ ժամերն նուիրում էր փիլիսոփայական, գրական և գեղարուեստական աշխատանքների։

* * *

*Արիզոնայի հոյակապ Խարացած անտառը.— Այս դարերից ի վեր մեռած անտառը, որ այժմ իր ագատի ծառերով ներկայանում է մեզ իբրև ընութեան մի սքանչելի հրաշալիք, շուտով անցնելու է Հիւսիսային Ամերիկայի վարչութեան անմիջական խնամատարութեանը։ Մինչեւ նահանգների երկրաբանական ընկերութեան հեղինակաւոր անդամներից մէկը, ուսուցչապետ Լեսաէր Ուորդը, ազգութիւնից ստացած լինելով յանձնարարական և այլ պաշտօնական թղթեր, արդէն ուղեւորուել է Արիզոնա, որպէս զի կարողանայ տեղնուտեղը ուսումնասիրել այդ կաբեւոր խնդիրը։ Հանրաբանական և երկրաբանական ընկերութեան կատարուած այդ անյետաձգելի քայլն ընդհանուրի կատարեալ համակրութեանն ու բաջալերութեանը կարժանանայ, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ աշխարհիս այդ միակ, իր տեսակում թանկագին դանձն ընդմիշտ ոչնչանալուց ազատ կմնայ։ Բազմաթիւ դէպքեր ապացուցանում են այդ տխուր փաստը և ճշմարիտ։ Ամերիկայում և Եւրոպայում չկայ մի շաբից քշից աչքի ընկնող թանգարան, որ այդ առասպելական անտառի ծառերի ճիւղերից և կամ ստաբերից մեծ ու փոքր կտոր ձեռք բերած չլինի։

«ԼՈՒՄԱՅ» ՀԱՆԴԷՍԻ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ՅՕԴՈՒՍԾԻ ԱՌԹԻՒ.

Կարդացի «Լումայի» մատենախօսական յօդուածը «Խորենացին ընթերցասիրութեան մէջ» (եր. 321—327. ա. գիրք 1900 թ.)։ Շատ բացայայտ երևում է՝ որ պ. Ա. Տէր Մինասեանի ցանկութիւնը չէ եղել քննել իմ գրքոյկը «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», այլ միայն ստացած զգայի համաձայն անապարել է վազ-վազ գնահատել նորան։ և իբր կողմից, իբրև վաղեմի «Արարատի առաջնորդարանը», չէ՞ որ պէտք էր տուիթը չփախցնել՝ պարտական ինձ չմնալու։ Չմոռանալով № 36 «Արձագանք» 1893 թ.։

Պարոնի շարադրած այնքան լաւ-լաւ և հարիւր թէ վատ կարծիքների մասին անտարբեր եմ. սակայն պէտք է նկատեմ որ, ինչպէս երևաց, նա չէ կարողացել ըմբռնել իմ գրածները։ Օրինակ, նա ընդ ամենը մի բան է մէջ բերում և սխալ գտնում, այն՝ որ «վերաբանութիւն» ես հասկանում եմ (բացատրելով ի հարկէ) բնազանցական ուսումն, փիլիսոփայութիւն, իսկ ինքը՝ աստուածաբանութիւն։ Մինչդեռ այդ մի և նոյն է՝ եթէ հասկանար որ այդ տեղ (իմ գրուածում) խնդիրը «վերաբանութեան» տեղի խնդիրն է, այսինքն իր տեղն է այդ բառը թէ՝ պէտք է յաջորդ ԿԲ. գլխի (Խորենացու) վերնագրի սկզբում դնել և հասկանալ «վերջաբանութիւն» ըստ Նորայր Բիւզանդացու և Բ. Պատկանեանցի որբագրութեան։

Բացի այդ, նա գրում է. «Խորենացու չորրորդ գրքի լինելութեան համար յիշեցնում է (ես), որ պէտք է Թ. Արծրունու պատմութեան մէջ յառաջ բերուածները ճշդել թէ ո՞րտեղից են վերցրած»։ և քիչ յետոյ՝ «քանի որ իւր (իմ) բոլոր քննութեան նախապատրաստութիւնը միմիայն Հ. Սահեփանէի թարգմանութեան յառաջաբանով է (տես յառաջաբան, էջ, Ժ.)»։

—Մի թէ՞ ես այդպիսի բան ունիմ գրած, կամ իմ գրածներից այդ է հետևում։ Պարոնը այդ տողերը գրելու ժամանակ ինքն իրեն հաշիւ չտուե՞ց թէ ախար գիրքը (իմ) շուտով և՝ շատերի ձեռքում և հրապարակում պիտի լինի...

Պ. Ա. Տէր Մինասեանը պարտաւո՞ր է պարզել գտնէ հետևեալը։ — Նոյն յօդուածում պարոնը գրել է. «Սակայն նոյն ոգին (անշարժ պահել ճշմարտութիւնը) պէտք է ունենայ ամեն գիտութիւն, միայն թէ ճշմարտասիրութեան սկզբունքով եւ ոչ թէ շահի կամ խղճի տեսակէտով (տես էջ 71. ծանօթութիւնը)»։

Շատ մութն է պարոնի խօսքը։ Ես տեսնում եմ սա թէ՝ «Լումայի» և թէ իմ գրքի 71 էջերը, այնու ամենայնիւ ոչինչ չեմ գտնում՝ որ կապ ունենար կամ հասկանալի կացուցանէր նորա խորհրդաւոր բառերը, որով կարող է շատ անեղատատ կարծիք տալ ընթերցողներին, մանաւանդ որոնք ձեռքում չեն ունենայ երկու գրքերն էլ՝ թէ վերահասու լինէին որ ոչինչ չկայ «շահի կամ խղճի տեսակէտով»։

Պարոնը պարտաւոր է պարզել իւր այդ տեղ ասածը՝ թէ ո՞ւմ կամ ընչի մասին է։

Բարդ. Վրդպ. Գէորգեան.

---

* Ի դէպ. անհրաժեշտ եմ համարում Խորենացու «բուսեկան բերդ» խօսքի բացատրութիւնս (հաս. ժ.) մէջ բացողուած՝ սակայն վերանայեալ ուսումնական մի ծանօթութիւնս հաղորդել Արարատի միջոցաւ։ Գիրքս ունեցողներդ, սրանց նուիրած եմ, պէտք է եր. 43. տող 4. «մի եւ նոյն դարուում գրողների մօտ» բառերից յետոյ դնեն 1։ եւ համապատասխան տեղում — նոյն երեսի ստորեւ գրեն մանր մնուագրով հետեւեալ ծանօթութիւնը. —

Ծան. 1. «Արիդեանոս ... բուսեկան այսպէս. Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հաւրեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամանեայ, Արամենակայ»։ — «Սա ... ծնանի նմա զԱրտաւազդ եւ այլս բազումս։ զորս ոչ կարեւոր համարեցաք այժմ անուանել բուսեկ» (Խոր. ա. Ե. եւ բ. Ժ.)։